ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԳՆԱՀԱՏԱՄԲ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Արդի հայագիտության մեջ ազգային-ազատագրական պայքարի թեմայի զարգացումը և խոր ուսումնասիրությունը սերտորեն կապվում է Մ. Գ. Ներսիսյանի գիտական գործունեության հետ և ամբողջացնում նրա խոշոր վաստակը իր կողմից հիմնավորապես մշակած հայ-ռուսական պատմաքաղաքական հարաբերությունների, հայ հասարակական մտքի պատմության և, ի վերջո, հայոց ցեղասպանության հիմնարար թեմաների ուսումնասիրության բնագավառներում: Իրենց որոշակի ինքնուրույնությամբ հանդերձ, նշված թեմաները փոխներթափանցված են Մ. Ներսիսյանի աշխատություններում, այլև տրամաբանորեն լրացնում են միմյանց՝ հանդես գալով իբրև նրա հետազոտական ծրագրի հիմք և իրականացում:

Տակավին 1946 թ. Մ. Ներսիսյանը պաշտպանեց իր դոկտորական ատենախոսությունը՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.» թեմայով, որը հրատարակվեց շուրջ մեկ տասնամյակ անց՝ 1955 թ.: Այս աշխատությունը սկզբունքորեն կարևոր նշանակություն ունեցավ առհասարակ հայ խորհրդային պատմագիտության համար, որչափով մերժում էր գաղափարական ու քաղաքական հրահանգների ուժ ունեցող մի ամբողջ շարք պատմագիտական դրույթներ՝ ապացուցելու այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի գոյատևման կարևորագույն միջոցներից մեկը նոր ժամանակներում ևս եղել է նրա ազատագրական պայքարը օսմանյան բռնապետության դեմ: Դրա հիմքում, ինչպես համոզում է Մ. Ներսիսյանը, ընկած էր հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարը բռնությունների դեմ, ազատության ձգտումը: Գիտնականը 1850–1870-ական թթ. ազատագրական շարժումների և դրանց գաղափարախոսության վերլուծությունը լծորդում է ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության խորը և հանդամանալի հետազոտության հետ: Ընդ որում, այն հենվում է քաղաքականապես երկու տարանջատ՝ Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների տնտեսական, հասարակական ու մտավոր-մշակութային կացության մշտական բաղդատման, զուգահեռների, փաստականորեն հագեցած նյութի վրա, որ հետազոտությունը դարձնում է համոզիչ ու ճշմարտացի: Մ. Ներսիսյանը եզրա-

կացնում է, որ համեմատած Արևելյան Հայաստանի հետ, Արևմտյան Հայաստանը գտնվում էր և՛ տնտեսական, և՛ հասարակական զարգացման շատ ավելի ցածր աստիճանի վրա՝ ի դեմս այն իրողության, որ թուրքական հասարակությունը գտնվում էր ասիական բռնապետության համատարած տիրապետության փուլում: Իրրև վերջինիս որակական բնութագիր, Մ. Ներսիսյանը բացահայտում է արևմտահայ գյուղացիության ճորտական կախվածությունը քուրդ և թուրք բեկերից ու աղաներից, նրա զանգվածային հողազրկությունը, օրինականացված կամ ապօրինի բազմաթիվ կողոպտչական հարկերն ու տուրքերը, պարհակները և այլն: Սոցիալական այս ծայրահեղ թշվառությունը ամրապնդվում էր արևմտահայ աշխատավորության իրավազուրկ դրությամբ, ազգային, կրոնադավանական ճնշումներով ու նվաստացումներով: Տնտեսական այս վիճակը քայքայում էր հայ դավառը, գյուղացիության մեջ ուժեղացնում պանդխտության երևույթը: Միաժամանակ, նաև՝ իբրև դրա հետևանք, այս կացությունը գյուղացիության մեջ սնուցանում էր սոցիալ-տնտեսական ու ազգային ծանր պայմաններից ձերբազատվելու որոնումներ, որի ելքը սուլթանական բռնակալության և ճորտական կախվածության դեմ մղվող պայքարն էր: Ձևավորվող ընդդիմության տրամադրություններր արևմտահայ իրականության մեջ անհրաժեշտորեն ստանում էին «նաև ազգային-ազատագրական բնույթ», եզրակացնում է Մ. Ներսիսյանը[1]: Շատ կարևոր է նաև, որ նա, ինչպես ասվեց, սկզբունքորեն տարբերում է քաղաքական ու գաղափարական այն իրականությունները, ուր տնտեսական ու ազգային ճնշումների էին ենթարկվում արևելահայ ու արևմտահայ հատվածները: Ըստ էության, այստեղից է սկիզբ առնում կամ ուրվագծվում այն հենքը, որի վրա Մ. Ներսիսյանը պետք է կառուցեր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման տեսահիմքը: Նկատի ունենք նրա այն եզրակացությունները, որ ռուսական առաջավոր մտավորականությունն ու հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները խորին համակրանքով էին վերաբերվում Ռուսաստանի ճնշված ազգությունների, այդ թվում և հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության գաղափարին, սլաշտպանում նրանց տնտեսական ու հոգևոր ազատ զարգացման ձգտումները՝ ելնելով հենց սեփական՝ ռուս ժողովրդի ազատագրման գաղափարից: Այս իմաստով համառուսական առաջավոր շարժումները միավորում էին ռուսներին և նրանց բախտակից ճնշված ժողովուրդներին: Թուրքական վայրագ իրականությունը, մինչդեռ, ինչպես ակնհայտորեն երևում է դեռևս 1850 –1870-ական թթ. հայ մամուլի ու եվրոպացի իրազեկ անձանց վկայություններից, արևմտահայության համար միանգամայն իրական էին դարձրել նրա ֆիզիկական և բարոյական կործանումը:

---

1 Մ. Գ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850 – 1870 թթ. Երևան, 1955, էջ 532:

Մ. Ներսիսյանը օսմանյան Թուրքիայի բարենորոգչական հնարավորությունները ևս գնահատում է իրատեսորեն՝ ոչ մի ներգործուն ուժ չտեսնելով ոչ 1839-ի հաթթը շերիֆի, և ոչ էլ արևմտահայերի Ազգային սահմանագրության (1860 և 1863) մեջ: Հիրավի, այդ սահմանադրությունը, որը գործել է միայն Կ. Պոլսում, Զմյուռնիայում և մի քանի գավառական կենտրոններում, ուներ սոսկ կրոնադավանաբանական, մշակութային-կրթական երկրորդական հարցերը կարգավորող կանոնադրական ինչ-ինչ նշանակություն, մնում էր իբրև «թղթի կտոր» և ի զորու չէր որևէ թեթևություն բերելու իրավազուրկ արևմտահայությանը: Բնականաբար, ամբողջովին զուրկ լինելով քաղաքական կամ տնտեսական որևէ արժեքից, այն չէր կարող, ինչպես նկատում է Մ. Ներսիսյանը, կասեցնել արևմտահայերի դրության հետագա վատթարացումը: Ավելին, բազմաթիվ փաստերի ու տվյալների վրա հենվելով, նա ցույց է տալիս, որ XIX դարի երկրորդ կեսին սուլթանիզմի գործադրած ազգային ճնշումների քաղաքականությունը էլ ավելի անհանդուրժող, հարձակողական ու բիրտ է դառնում նրա նախորդ տարիների քաղաքականությունից[2]: Իբրև այս եզրակացության նախադրյալներ և այդ քաղաքականության որոշակի դրսևորումներ, Մ. Ներսիսյանը վկայակոչում է թուրքական կառավարության ձեռնարկած «կտրուկ» միջոցները Զեյթունի և Աասունի դեմ՝ Այդպիսի դրսևորումները էին նաև արևմտահայերի համահավաք բնակության դեմ ուղղված Բ. Դռան քաղաքական ու վարչական վճիռները, նրանց ցրումը մահմեդական մեծամասնության մեջ և այլն: Պատմաբանը առանձնացնում է նաև նշվածը հատկապես ընդգծող նոր երևույթ՝ հայկական ջարդերի կազմակերպման պետական ծրագրի իրականացումը 1860–1880-ական թթ., Արևմտյան Հայաստանում (մասնավորապես Վանի և Ալաշկերտի շրջաններ) հայ բնակչության զանգվածային կոտորածների սանձազերծումը, այդ նպատակով կանոնավոր զորքի և քրդական ցեղերի օգտագործումը[3]: Մ. Ներսիսյանը բացահայտում է այս նոր քաղաքականության իրական մի շարք պատճառներ, ինչպես ծայրահեղորեն ազգայնական թուրքական բուրժուազիայի հետադիմական պայքարը կայսրության ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ, պանիսլամիզմի և պանթուրքիզմի մոլի քարոզչությունը ընդդեմ այդ ժողովուրդների, նրանց ազգային, կրոնական, մշակութային ինքնության ժխտումը և այլն: Օսմանյան կայսրության ամբողջականությունը ազատագրական շարժումների հարվածներից ապահովելու, ճնշված ազգերի պայքարը կանխելու ջղաձիգ ճիգերը ևս, մասնավորապես Բալկանների մի մասի և Հունաստանի կորստից հետո, թուրքական կառավարողներին մղում էին ուժեղացնելու ազգային ճնշումները[4]: Հպատակ ժողովուրդ-

2 Նույն տեղում, էջ 74-77:

3 Նույն տեղում, էջ 76:

4 Նույն տեղում, էջ 79:

ների ազատագրական պայքարի դեմ համատարած արշավանքում, ինչպես բացահայտում է Մ. Ներսիսյանը, թուրքական հետադիմական վերնախավի քաղաքական մտածողությունն ու վարքագիծը դրսևորվում էր ազգայնամոլ՝ պանիսլամական և պանթուրքական գաղափարախոսությունները գործի դնելով:

Ժամանակի գաղափարական տեսահիմքերին հենվելով և մարքսիստական մի քանի հիմնարար դրույթների նպատակասլաց օգտագործմամբ Մ. Ներսիսյանը քողարկված, բայց և միանգամայն ընկալելի բանավեճ է մղում նույն այդ տեսության պահպանողական կամ ծայրահեղական մեկնաբանների հնարավոր առարկությունների դեմ այն տեսակետից, որ նա գաղափարական վերանայման պետք է ենթարկեր «ազգայնական» հորջորջված XIX դարի հայ առաջավոր հասարակական մտքի ներկայացուցիչներին: Վերջիններս՝ Ռ. Պատկանյանը, Ստ. Նազարյանցը, Սա. Ոսկանյանը, Բաֆֆին, Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը վիթխարի դեր են կատարել ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության զարգացման գործում, ուստի հետազոտողից պահանջվում էին ոչ միայն քաղաքացիական առաքինություն, այլև մեծ համարձակություն՝ թոթափելու պաշտոնական գաղափարախոսության պիտակները նրանց լուսավոր դեմքերից և հիմնավորել նրանց իրոք առաջավոր դերն ու նշանակությունը հայ ազատագրական գաղափարախոսության մեջ: Ուշագրավ է, որ Մ. Ներսիսյանը արևելահայ և արևմտահայ մտավորականության քաղաքական կապերով, ուրեմն և ազատագրական պայքարի համազգային գաղափարախոսությամբ է մի հայտնի չափով բացատրում ազդության կազմավորման ընդհանուր դրդիչները[5]: Այս փուլի առանձնահատկությունները ցույց են տրվում մի շարք ծանրակշիռ օրինակներով, մասնավորապես այն իրողությամբ, որ XIX դարի երկրորդ կեսին սկսվում է ազատագրական շարժման նոր շրջան՝ զանգվածային ընդգրկումների, համազգային շարժման շրջանը: 1862 թ. Զեյթունում բռնկված զինված ապստամբությունը, որ տեղի ունեցավ արդեն համազգային գաղափարախոսության ձևավորման շրջանում, աննախընթաց լայն արձագանք ստացավ և՛ արևմտահայ, և՛ արևելահայ հատվածներում[6]: Մ. Ներսիսյանի այս, ինչպես և հետագա աշխատություններում հիմնավոր վերլուծության է ենթարկվել ազգային-ազատագրական շարժման ուղղվածության հիմնահարցը: Նա եզրակացնում է, որ այդ շարժումը ուղղված էր սուլթանական Թուրքիայի դեմ, մինչդեռ Ռուսաստանում կարևորագույնը ժողովրդավարական հեղաբեկումների խնդիրն էր, սոցիալական հեղաբեկումների խնդիրը: Օսմանյան Թուրքիայում արևմտահայությանը հուզող սոցիալական խնդիրը ստորադասվում էր քաղաքական ազատագրական պայքարի խնդրին: Մ. Ներսիսյանը չի բացառում,

5 Նույն տեղում, էջ 95:

6 Նույն տեղում:

որ Արևելյան Հայաստանում ևս ցարիզմի ազգային ճնշումները իբրև հակազդեցություն առաջ էին բերում ազգային պայքարի դրսևորումներ, սակայն խնդրի էությունը դրանից չէր փոխվում, քանի որ առաջնայինը այստեղ պայքարն էր երկրի սոցիալական վերափոխումների համար[7]: Հիրավի, արևելահայ ժողովրդավարական գործիչները երբևէ արևելահայերի քաղաքական կամ ազգային անկախության կոչ չեն արել, այլ ընդհակառակն, բազմիցս արտահայտվել են ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ ուղղելու մասին (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Րաֆֆի, տարաստիճան մտավորականության այլ ներկայացուցիչներ և այլն): Հատկապես Մ. Նալբանդյանի գործունեությունը բնութագրելիս Մ. Ներսիսյանը դիտում է, որ ռուսական հեղափոխական շարժման գաղափարախոսների հետ միասին նա արևմտահայության սոցիալական ու ազգային ազատագրությունը կապակցում էր ռուս ժողովրդի պայքարի ու ազատագրության հեռանկարներին: Ավելին, նա բազմաթիվ փաստեր վկայակոչելով հաստատում է, որ թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական պայքարը խորապես հուզում էր ոչ միայն Արևելյան Հայաստանի, այլև բազմաթիվ հայկական գաղթավայրերի բնակչությանը: Դրա վկայությունն է գաղութաբնակ հայ կամավորների ընդգրկումը ռուսական բանակի կազմում՝ ընդդեմ թուրքական զորքերի: Դրանով Մ. Ներսիսյանը ընդգծում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի համազգային բնույթը:

Խնդրո առարկա գրքում, ինչպես նաև իր հետագա աշխատություններում, Մ. Ներսիսյանը հանգամանալի քննության է ենթարկում 1850–1870-ական թթ. թուրքական բռնակալության դեմ գործնական-քաղաքական պայքար ծավալած հայ գործիչների և գաղտնի խմբակների գործունեությունը (Մ. Նալբանդյան, Հ. Սվաճյան, Ա. Թագվորյան, Մ. Պեշիկթաշլյան և ուրիշներ, Ալեքսանդրապոլի «Բարենպատակ» ընկերությունը և այլն)[8]:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման կարևոր դրսևորումներից մեկը դիտելով նրա մասնակցությունը XIX դարի ռուս-թուրքական պատերազմներին, Մ. Ներսիսյանը բացահայտում է այդ մասնակցության բուն պատճառը՝ արևմտահայերի համար բարենպաստ հնարավորությունների ստեղծումը թուրքական լծից ազատագրվելու գործում, այդ հնարավորությունների իրացումը ռուսական զենքի հաղթանակների հետ կապելու ժողովրդի հավատը: Նա շրջանառության մեջ է դնում բազմաթիվ վավերագրեր, արդեն հայտնի և իր իսկ հայտնաբերած՝ անհերքելի լրատվություն պարունակող փաստաթղթեր՝ ներկայացնելով հայության բազմակողմանի մասնակցությունը 1828–1829, 1853–1856, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներին: 1870-ական թթ. ազատագրական շարժումների կա-

7 Նույն տեղում, էջ 99 –100:

8 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից. Երևան, 1982, էջ 129 –141:

պակցությամբ Մ. Ներսիսյանը նույն հետևողականությամբ ի հայտ է բերում Զեյթունի, Վանի շարժումների, այլև կազմակերպությունների (Վանի՝ «Միություն ի փրկություն», 1872, Կաբինի՝ «Պաշտպան հայրենյաց», 1881–1882 և այլն) գործունեության հետ կապված ուշագրավ փաստեր՝ առնչելով դրանք ծավալվող ազատագրական շարժումներին:

Ազատագրական շարժման բովանդակությունն ու ընթացքը բացահայտելիս Մ. Ներսիսյանը բուն շարժմանն է համադրում նրա գաղափարախոսությունը և հոսանքները: «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.» աշխատության մեջ ըստ ամենայնի մշակված է ժամանակի հայ պատմագրության համար բոլորովին նոր և արժեքավոր՝ ազատագրական շարժման ժամանակագրությունը՝ XVIII դար, XIX դարի առաջին կես և դրանցից որակապես տարբերվող՝ XIX դարի երկրորդ կես: Այս վերջին փուլի որակական առանձնահատկություններն էին՝ առավել աչքի ընկնող մարտական բնույթը, ժողովրդի զանգվածների մեջ թողած լայն արձագանքները և գործնական ու քաղաքական որոշակի հետևանքները[9]: Հետազոտական այս կտրվածքով էլ համադրվում են հայ ազատագրական շարժման գաղափարախոսների հայացքները և հայ իրականության մեջ նրանց թողած լուրջ ազդեցության երևույթը: Աշխատության լայն ընդգրկումներից ելնելով, Մ. Ներսիսյանը բնորոշ գծերով է ներկայացրել նաև ժամանակի արեմտահայ և արևելահայ պարբերականները («Հյուսիսափայլ», «Արծվի Վասպուրականի», «Մեղու», «Ծաղիկ», «Մշակ» և այլն)՝ բացահայտելով դրանց տեղն ու դերը ազատագրական շարժման քարոզչության մեջ: 1850–1870-ական թթ. ազատագրական շարժման մեջ նա ի հայտ է բերում երկու հիմնական ուժ՝ գյուղացիություն և բուրժուազիա և ըստ այդմ էլ դասակարգում այդ շարժման երկու գլխավոր հոսանքները՝ գյուղացիական-դեմոկրատական և բուրժուա-ազգայնական: Անշուշտ, նման բաժանումը բխում է ժամանակի գաղափարախոսական հենքով պայմանավորված մտայնությունից և սակայն, պետք է ավելացնել, որ մինչև այժմ հայ պատմագրությունը դեռևս չի մշակել այս դասակարգմանը հակադրվող, նույնիսկ զուգորդվող այլ մոտեցում կամ ազատագրական շարժումը և նրա հոսանքները բնութագրող այլ համակարգ, ուստի Մ. Ներսիսյանի՝ խնդրո առարկա հիմնահարցի մշակումը պահպանում է իր կենսունակությունը:

Մ. Ներսիսյանը գյուղացիական-դեմոկրատական հոսանքի բնութագրական գիծն է համարում ազատագրության հարցը գյուղացիության շահերի տեսանկյունից ըմբռնելը, այդ հարցը ազգային և սոցիալական միասնության մեջ համատեղելը: Այս հոսանքը (Մ. Նալբանդյանի և նրա համախոհների ղեկավարությամբ) մերժում էր Արևմտյան Հայաստանը Եվրոպայի օգնությամբ ազատագրելու գաղափարը և հայ ժողովրդի ազատագրա-

9 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 209–210:

կան պայքարը առնչում էր ռուսական հեղափոխական շարժման հետ: Մյուս՝ բուրժուա-ազգայնական հոսանքը, ինչպես նկատում է Մ. Ներսիսյանը, ի հայտ էր բերում ազատագրական շարժմանը ազգային վերնախավի շահերին համապատասխան ընթացք տալու մտայնություն և այդ ընթացքի ուղղությունն ու նպատակների իրագործումը կապում էր բացառապես Թուրքիայում եվրոպական քաղաքականության կամ դրա միջամտության հետ: Վերլուծության են ենթարկվում այս հոսանքի ներկայացուցիչների քաղաքական ծրագրերի ոչ հետևողականությունն ու ոչ արմատականությունը:

1850–1870-ական թթ. ազատագրական շարժման կապերին և ազդեցություններին անդրադառնալիս Մ. Ներսիսյանը սկզբունքային առարկություններ է անում անվանի պատմաբան Լեոյին. վերջինս իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման սկիզբը կապում էր բացառապես նարոդնիկական շարժման ազդեցության հետ, ազատագրական շարժման պատճառները տեսնում էր ոչ թե արևմտահայության անմարդկային ճնշումների ու կեղեքումների իրողության մեջ, այլ դրսից եկած գաղափարների ու ազդեցությունների արդյունք էր համարում: Իր մի այլ աշխատության մեջ Մ. Ներսիսյանը ցույց է տալիս, որ ինչպես «Խոջայական կապիտալում», այնպես էլ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ և իր հուշերում Լեոն XVIII–XIX դդ. հայ ազատագրական շարժումները գնահատել է գռեհիկ սոցիոլոգիզմի և ազգային նիհիլիզմի դիրքերից[10]: Բանավեճը, սակայն, չի խանգարել Մ. Ներսիսյանին՝ անաչառորեն բարձր գնահատելու Լեոյի «բազմաթիվ ու բազմաբովանդակ աշխատությունների ուժեղ... կողմերը», նրա դիտական խոշոր ժառանգության մնայուն արժեքները:

Ազատագրական շարժումների կողմնորոշումների հիմնահարցը Մ. Ներսիսյանը հիմնավորել է նաև այդ կողմնորոշումների հիմնավորվածության տեսանկյունից: Փաստական հարուստ տվյալներով նա բացահայտել է արևմտյան տերությունների իրական դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցում: Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի քաղաքականությունը Թուրքիայում առաջնորդվել է այդ տերությունների շահերով, որոնք քողարկվել են Թուրքիայի ամբողջականության պաշտպանի կեղծավոր կեցվածքով: Անկախ դիվանագիտական վայրիվերումներից, ինչպես ցույց է տալիս Մ. Ներսիսյանը, նրանք պաշտպանել են սուլթանական բռնապետությունը և թշնամական դիրք գրավել ազատագրական շարժումների նկատմամբ: Նա եզրակացնում է, որ Արևմուտքի այս հետադիմական դիրքորոշումը շարժման դեմ ոչ միայն խոչընդ-

10 Մ. Գ. Ներսիսյան. Պրոֆեսոր Լեոյի պատմագիտական ժառանգությունը («Հայ ժողովրդի նոր պատմության էջերից» գրքում, էջ 252-266):

դոտեց վերջինիս զարգացումն ու հաջողությունը, այլև օգնեց սուլթանական կառավարությանը բնաջնջելու արևմտահայ բնակչությանը[11]:

Մ. Ներսիսյանը անվերապահորեն ընդունում է, որ ազատագրական շարժումն ուներ ռուսական կողմնորոշում, ընդ որում, նա այս հանդամանքը համարում է շարժման հիմնական ու բնորոշ կողմերից մեկը: Ռուս և հայ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության հիմքերը նա հայտնաբերում է պատմական խոր անցյալում՝ սկսած դեռևս XI –XII դդ., Կիևյան Ռուսիայի ժամանակներից և ապա XVII–XIX դդ.: Արևմտահայերի ռուսական կողմնորոշումը գրսևորվել է ոչ միայն ժողովրդի՝ Ռուսաստանի օգնությամբ թուրքական բռնապետությունից ազատագրվելու, այլև հայ երկու խոշոր հատվածների՝ ազատագրական շարժման ղեկավար գործիչների նույն համոզմունքն ունենալու իրողություններով:

Դեռևս 1940 թ. տպագրած «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» աշխատության մեջ Մ. Ներսիսյանը ուրվագծում էր 1880 –ական թթ. նարոդնիկության հետ ազգային-ազատագրական պայքարի գաղափարների առնչությունները: 1880–1890-ական թթ. հայ տարաստիճան մտավորականության մի մասը նարոդնիկության կրախից հետո անցել է ազատագրական շարժման դիրքերը[12]: Մ. Ներսիսյանը մակաբերում է, որ տարաստիճան մտավորականությունը ունեցել է ռուսական կողմնորոշում այն դրսևորելով իր քարոզչական գործունեության մեջ: «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատության մեջ նույնպես նա անդրադառնում է ռուս և հայ ժողովուրդների քաղաքական շփումների ևս մի կարևոր փուլին՝ Անդրկովկասում դեկաբրիստների գործունեությանը, նշելով երկու կարևոր հանգամանք. նախ, դեկաբրիստները գենքը ձեռքներին կռվում էին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, իրենց լուման բերելով հայ ժողովրդի ազատագրմանը, և երկրորդ, այս ժամանակից է սկսվում երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների նոր շրջանը՝ երբ երկու կողմերի այդ հարաբերությունների մեջ ընդգրկվեցին լայն զանգվածներ[13]:

Հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական հարաբերությունների թեման Մ. Ներսիսյանը հետադա մշակման ենթարկեց իր մի շարք աշխատություններում՝ այն հարստացնելով տեսական նոր եզրահանգումներով և փաստավավերագրական տվյալներով[14]:

---

11 М. Г. Н е р с и с я н. Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма в 1860-1870-х гг. и западные державы.- В кн.: *Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 192-206:*

12 *Մ. Գ. Ներսիսյան. Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում. Երևան, 1940, էջ 75:*

13 *Մ. Գ. Ներսիսյան. Դեկաբրիստները Հայաստանում. Երևան, 1958:*

14 *Տե՛ս* М. Г. Н е р с и с я н. Декабристы в Армении, Ереван, 1975. О н ж е. Новые данные о декабристах, сосланных на Кавказ. Декабристы и их друзья за присоединение Армении к России в 1826-1829 гг. Денис Давыдов в Армении. *Արևելյան Հայաստանի*

Ազատագրական պայքարի թեմայի ուսումնասիրությունը Մ. Ներսիսյանը խորացրեց իր վերջին՝ «Պատմության կեղծարարները» (Երևան, 1998թ.) գրքում: Այստեղ նրան զբաղեցնող հիմնահարցերում քննության են առնվել արդի հայագիտական միտքը հուզող այնպիսի բնագավառներ, որպիսիք են հայերի զանգվածային կոտորածներն ու ցեղասպանությունը ժխտող թուրքական պատմաբանների կեղծարարության բացահայտումը, հայերի արտաքին քաղաքական կողմնորոշման, ազատագրական շարժման XX դարի առաջին տասնամյակների դրսևորումները և այլն: Գրքում հիմնավորապես հերքվում են թուրք պատմաբաններ Ա. Ինանի, Է. Ուրասի, Մ. Քյոփրյուլյուի, Ի. Ուզունչարշըլըի, Օ. Բարքանի, Թ. Գյոքբիլգիի, Շ. Ալթընդաղի և սրանց համախոհների՝ տասնամյակներ ի վեր խնամքով հյուսած առասպելը՝ սուլթանների կողմից Ասիայի ու Եվրոպայի երկրներում իբր օրինականություն հաստատելու, հպատակ ժողովուրդների մեջ «քաղաքակիրթ առաքելություն» իրականացնելու վերաբերյալ: Ցույց է տրվում, որ թուրքական պատմագիտական միտքը դեռևս 1930-ական թթ. սկսած կատարում է պանթուրքիզմի գաղափարական պատվերը՝ առաջնորդվելով բացառապես քաղաքական հրահանգներով: Մ. Ներսիսյանի քննադատական այս հայեցվածքը վերաբերում է նաև Արևմուտքի մի խումբ արևելագետ պատմաբանների, որոնց ակնհայտ չինծու դիրքորոշումն այս հարցում չի սպառվում սոսկ գաղափարական շահախնդրություններով, այլև մեծ մասամբ մատնում է նյութական բավարարված նախասիրություններ: Ընդ որում Մ. Ներսիսյանը հատուկ ուշադրություն է դարձրել պատմության կեղծարարների այն դատողություններին, թե Մեծ Եղեռնի հիմնական պատճառը 1914թ. հայկական կամավորական շարժումն էր և Վանի հայության 1915թ. զինված պայքարը թուրքական բանակի և իշխանությունների դեմ: Եղեռնի ոճրապարտներին արդարացնող այս կեղծիքը Մ. Ներսիսյանը հերքում է անժխտելի փաստարկով. «Իրականում Մեծ ոճիրի պատճառը թուրք ազգայնամոլների պանթուրքիստական ծրագրերն էին... որոնք մշակվեցին և ընդունվեցին իթթիհաթականների (երիտթուրքերի) կողմից դեռևս 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած նրանց գաղտնի ժողովներում ու համագումարում»[15]: Այս առնչությամբ դիտնական քննության առարկա է դարձնում մեր պատմագիտության մեջ ամբողջովին կամ գրեթե ամբողջովին չհետազոտված մի այնպիսի հարց, ինչպիսին Եղեռնին ընդհուպ նախորդող ժամանակաշրջանի (1912–1914 թթ.) հայ հասարակական կարծիքի ու տրամադրությունների վերհանումն է: Մ. Ներսիսյանը իրավացիորեն նկատում է, որ որոշ թերթեր կարողացան կռահել առաջիկա համատարած կոտորածների նախապատրաստումը՝ ի տես գավառներում սանձազերծված անզուսպ բռնությունների ու ոճրադործու-

---

միացումը Ռուսաստանին: Ա. Վ. Սուվորովի հայ զինակիցներն ու բարեկամները (տե՛ս Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից):

15 Մ. Գ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները. Երևան, 1998, էջ 53:

թյունների: Այսպես է հիմնավորվում այն անվիճելի եզրակացությունը, որ «Վանի հայերը ոչ թե ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմել ինքնապաշտպանական կռիվների»[16] (ընդգծումը հեղինակինն է – Ա.Խ.):

Գրքում սեղմ գծերով բնութագրվում են բռնակալությանը համակերպվող ուժերը՝ իր սոցիալ-տնտեսական շահերի բերումով թուրքական իշխանություններին զորակցող արևմտահայ ապազգայնացած խոշոր բուրժուազիան և հայ պաշտոնեությունը՝ այսպես կոչված «էֆենդիական դասը», որոնք կտրականապես հանդես էին գալիս ազատագրական շարժման դեմ: Այս դասը , իրոք, հակադրվում էր ժողովրդին և նրա բաղձանքներին. դեռևս 1872 թ. նրա հրահրումներով չորս ամսով խափանվել էր Կ.Պոլսի «Արարատ» թերթը (խմբագիր՝ Մ.Այվատյան) միայն այն բանի համար, որ մեկ դարձվածով մերկացրել էր հայ էֆենդիների քաղաքական նկարագիրը, նշելով, թե «Հեթանոսին (թուրք իշխանավորների – Ա.Խ.) հացն ուտողը անոր թուրը կքաշե»[17]:

Գրքում ի մի են բերվում հեղինակի տարբեր տարիներին գրված աշխատությունները նաև XX դարի առաջին տասնամյակների ազատագրական շարժումների վերաբերյալ: Մ.Ներսիսյանը եզրակացնում է, որ այս շրջանում շարժումը տեսական ու մարտական աննախընթաց հիմնավորում գտավ՝ XIX դարի երկրորդ կեսին, հիմնականում ընթացք և ուղղություն ստանալով արմենականների, հնչակյանների և Հայ Հեղափոխական Դաշնակցության կողմից: Ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը այս գրքում քննության է առնվում նոր՝ պատմության կեղծարարներին հերքելու տեսանկյունից: Մ. Ներսիսյանը հիմնովին ժխտում է հորինածո դրույթը հայ ազատագրական շարժումները Ռուսաստանի կողմից արհեստականորեն բորբոքելու վերաբերյալ: Նույն կերպ հերքվում է կեղծարարների մի այլ փաստարկը, ըստ որի Օսմանյան կայսրության մեջ հայերն ապրել են բարեկեցիկ կյանքով և որ իբր նրանց հակասուլթանական ընդվզումները հրահրվել են կոմիտեների կողմից և չեն վայելել ժողովրդի համակրանքն ու աջակցությունը: Այս տեսակետի սնանկությունը հեղինակը բացատրում է դրա շինծու, հակապատմական բնույթով. հայ ժողովուրդը, օրինակ, սուլթանիզմի դեմ ըմբոստացել է նաև 1720-ական թթ., կոմիտեներից ավելի քան մեկ և կես դար առաջ: Ազատագրական պայքարի միակ և հիմնական պատճառը, նկատում է նա, օսմանյան ծանր լուծն էր, որից դարեր ի վեր ազատագրվել էին ցանկանում օսմանյան տիրապետության տակ հեծող հպատակ ժողովուրդները՝ հայերը, հույները, բուլղարները և այլն:

Մ. Ներսիսյանի՝ ազատագրական շարժմանը նվիրված աշխատությունների մեջ պետք է առանձնացնել ազատագրական շարժման խոշոր

16 Նույն տեղում:

17 «Մասիս», Կ.Պոլիս, 3 փետրվարի 1872:

գործիչներին նվիրված ուսումնասիրությունները: Այս տեսակետից առանձնահատուկ արժեք ունի «Ժողովրդական հերոսը (զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ)» հոդվածը[18]: Մ. Ներսիսյանը ելնում էր իր իսկ՝ ազատագրական շարժումը նորովի գնահատելու, ուրեմն և շարժման հերոսների գործունեությունը դրան համապատասխան և ամբողջական ներկայացնելու հայեցակետից: Մերժելով ժողովրդական հերոսի կերպարին պարտադրված ոչ օբյեկտիվ, աչառու տեսակետները, նա դեռևս 1965-ին կանխում էր մեր օրերում ևս իրեն զգացնել տվող ձախող մոտեցումները զորավարի անձի և գործունեության նկատմամբ: «Անդրանիկը ո՛չ քաղաքագետ էր և ո՛չ էլ դիվանագետ: Չնայած այն բանին, որ օժտված էր առողջ դատողությամբ և ժողովրդական իմաստության բարեմասնություններով, այնուամենայնիվ, նրա համար երբեմն դժվար էր ճիշտ կողմնորոշվել հայկական ազատագրական շարժման և ժամանակի միջազգային հարաբերությունների բավական բարդ և խճճված հարցերում: Նա մարտիկ էր, պարտիզան և զորավար, իր կոչումն էր կազմակերպել զինված ելույթներ բռնակալների դեմ և զենքը ձեռքին կռվել ժողովրդի ազատության համար»,– դրում է Մ. Ներսիսյանը[19]: Ազատագրական շարժման մեջ Անդրանիկի ակնառու դերին և հայրենանվեր գործունեությանը նա անդրադարձավ նաև այլ աշխատություններում, հրապարակային ելույթներում և գրախոսականներում, որոնցից վերջինը նրա գրախոսականն է Ա.Զելեպյանի «Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը» աշխատության մասին[20]:

Ազատագրական շարժման վերաբերյալ Մ. Ներսիսյանի աշխատությունները իրենց գիտական և պատմաքաղաքական արժեքով դուրս են դալիս ազգային պատմագրության շրջանակներից և սեփական տեղ ապահովում առհասարակ միջազգային հանրության պատմագիտական մտքի մեջ: Բացի հայ ժողովրդի ցեղասպանությանը նվիրված նրա մեծարժեք աշխատություններից, որոնք ինքնին ունեն միջազգային հնչեղություն և ճանաչում, պետք է նաև առանձնացնել 1965 թ. ականավոր պատմաբանի սկսած ինքնատիպ բանավեճը խորհրդային պատմագրության մեջ խոր արմատներ ձգած տեսակետի, այսպես կոչված, «քեմալական ազատագրական շարժման» մասին, որ իբր, ուղղված էր ընդդեմ «ինտերվենտների» (իմա անգլիացիների, հայերի և հույների): 1922 թ. սեպտեմբերին քեմալականների կողմից Զմյուռնիայի հույների և հայերի կոտորածը փաստորեն հիմնավորող այսպիսի կարծիքը կտրականապես հերքելով՝ Մ.Ներսիսյանը ցույց է տալիս, որ արհամարհելով տասնյակ հազարավոր հայ և հույն զոհերի հիշատակը, ԱՄՆ-ում ու եվրոպական մի շարք պետություններում «թուրքո-

18 Մ. Գ. Ներսիսյան. Ժողովրդական հերոսը (Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 25 փետրվարի 1965:

19 Նույն տեղում, էջ 244:

20 Մ. Գ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները, էջ 212-216:

ֆիլությունը» նորից դարձել է ստրատեգիական խոշոր նպատակներ հետապնդող պետական քաղաքականություն՝[21], թարմ ուժ ներարկելով պանթուրքիզմի սմքած, բայց արյուն տենչացող երակներին: Այսպիսի եզրակացությունը այսօր ևս պահպանում է իր հրատապությունն ու ճշմարտացիությունը, ինչը վկայվում է ժամանակակից քաղաքական իրադարձություններով:

Առաջացած տարիքում ևս Մ.Ներսիսյանը շարունակում էր ազատագրական շարժման պատմության հետազոտությունը՝ հարստացնելով ու լրացնելով այն նոր կողմերով, փաստերով ու դրանցից բխող տրամաբանությամբ: Արխիվային նոր նյութերին հենվելով, նա բացահայտում է ազատագրական շարժման հետ կապվող հանգամանքները 1910-ական թթ., որպիսիք էին Հայկական հարցի վերարծարծումը, հայ կամավորների գործունեությունը և կամավորական շարժման գնահատականը, ժամանակի հայ քաղաքական գործիչների դիրքորոշման վերհանումը արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների հարցում և այլն[22]: Իր գիտական գործունեության վերջին շրջանում՝ 1990-ական թթ., Մ.Ներսիսյանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հրապարակմանը (որոնց, ի դեզ, նա միշտ էլ բացառիկ նշանակություն է տվել պատմական իրողությունների ճշմարտացի լուսաբանման գործում), դրանց կցելով սեփական ազդու եզրակացությունները: Պատմական վավերագրերի նշանակության ընդգծումով Մ.Ներսիսյանը ինչ-որ տեղ նկատի ուներ մեզանում ևս աշխուժացած կողմնակալ, երբեմն՝ պատեհապաշտության մղումով ազատագրական շարժումները և պատմական այլ իրողությունները «նորովի» գնահատող վաղամեռիկ տեսակետները: Իր շատ ուշագրավ և վերջին հարցազրույցներից մեկում նա անդրադառնում է տագնապալի այս հանգամանքին. «Որոշ հեղինակներ, հանդես բերելով բացահայտ անգիտություն, փորձում են վարկաբեկել մեր ժողովրդի վերջին դարերի ազգային-ազատագրական շարժումը, նրա փայլուն ներկայացուցիչներին՝ Իսրայել Օրուն, Խաչատուր Աբովյանին, Ներսես Աշտարակեցուն, զորավար Անդրանիկին և ուրիշներին: Դեռևս կան «գիտուններ», որոնք խոսելով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին թուրքական բռնապետության դեմ ծավալված հայ ազատագրական շարժման մասին, աշխատում են ինչ-ինչ նկատառումներով ժխտել, նսեմացնել հայ ազգային քաղաքական կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանների ու արմենականների գործուն մասնակցությունը և ղեկավար դերը այդ ժողովրդական պայքարում»[23]:

---

21 Նույն տեղում, էջ 123:

22 Նույն տեղում, էջ 238-337:

23 Նույն տեղում, էջ 236-237:

Մ.Ներսիսյանի աշխատություններում թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարը արժեքավորվում է որպես հայ ժողովրդի գոյատևման հզոր միջոց, դարերի ընթացքում նրա ինքնությունը պահպանող կենսաձև: Եվ նա յուրովի իր ավարտին է հասցրել ազատագրական պայքարի էպոպեան՝ ստեղծելով կառուցիկ և պատմականորեն տրամաբանված մի կոնցեպցիա, որը ուրույն և անվիճելիորեն բարձր ոլորակ է հայ պատմագրության մեջ: Զորեղ խթան տալով նաև Եղեռնի պատմագրության զարգացմանը և այս բնագավառում կատարելով վիթխարի գործ՝ հրատարակելով «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և վավերագրերի մեծարժեք ժողովածուները հայերեն և ռուսերեն լեզուներով, Մ.Ներսիսյանը ամենևին չէր գնում արևմտահայերի քաղաքական ճակատագրի պատմության վերջակետը: Մեծավաստակ գիտնականը այստեղ ևս առանձնացնում է ազատագրական պայքարի, ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը հայ ժողովրդի ազգային արժանապատվության, նրա պատվի և հարատևման գործում:

ПРОБЛЕМА ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРМЯНСКОГО НАРОДА В ТРУДАХ АКАДЕМИКА М. Г. НЕРСИСЯНА

Доктор истор. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Освободительная борьба армянского народа против турецкого ига во второй половине XIX в.-10-х годах XX в. является одной из основных составляющих частей историографического наследия М. Г. Нерсисяна. Ученый разработал цельную и обоснованную концепцию освободительной борьбы, подвергнув глубокому и всестороннему анализу ведущие силы социального движения и его идеологию. Особое внимание М. Г. Нерсисян уделил оборонительным боям западных армян, общенациональному резонансу этой самообороны как в Западной и Восточной Армении, так и в армянских зарубежных колониях. Он высоко оценил деятельность представителей демократического крыла движения и обогатил концепцию русской ориентации армянского народа. В своих работах М. Г. Нерсисян неоднократно разоблачал фальсификации турецких и некоторых западных историков, касающиеся освободительной борьбы, положения западных армян и политики геноцида турецкого правительства в отношении армян. Труды М. Г. Нерсисяна оказали существенное влияние на исследовательское направление армянской историографии второй половины XX в.

THE PROBLEM OF ARMENIAN LIBERATION STRUGGLE IN THE WORKS OF ACADEMICIAN M. G. NERSISSIAN

Doctor of Hist. Sciences A. A. KHARATYAN

Summary

The liberation struggle of the Armenian people against the Turkish yoke iz one of the main constituents of the historiographic heritage of M. G. Nersissian. It includes the second half of the XIX c.– the first decades of the XX c. The historian worked out a complete and well-founded conception of the liberation

struggle and analized the leading forces of the social movement and its ideology. A special attention was paid by M. G. Nersissian to the self-defence battles of the Western Armenians and their resonance in Western and Eastern Armenia as well as in the Armenian colonies abroad. He highly appreciated the activities of the representatives of the democratic wing of the movement and enriched the conception about the Russian orientation of the Armenian people. M. G. Nersissian often unmasked the falsifications of the Turkish and some western historians in connection with the liberation struggle, the state of Western Armenians and the policy of genocide carried out by the Turkish government towards the Armenians. M. G. Nersissian's works had considerable influence on the direction of historical research of the Armenian historiography of the second half of the XX century.